



# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Վեցերորդ եւ Եօթներորդ Դարեր

Վեցերորդ եւ Եօթներորդ դարերը Հայոց գրականութեան եւ առհասարակ մտաւորական եւ քաղաքական կեանքին ամէնէն հարուստ եւ բեղուն դարերը եղած են: Որքան կարեւոր են այս դարերը մեր ինքնութեան պատմութեան համար, նոյնքան սկզբնական աղբիւրները զոհ գացած են կործանումի եւ կորուստի:

Այս հարուստ եւ ստեղծարար շրջանէն շատ քիչ գրական նկարագիր ունեցող գրութիւններ հասած են մեզի. ինչ որ հասած է մեծ մասով գիտական եւ իմաստասիրական բնոյթ ունին, իսկ աղբիւրներուն մեծ մասը գործածուած ըլլալով որպէս դասագիրքեր յաջորդ դարերու ընթացքին՝ կը կրեն յետագայ բազմապատիկ խմբագրութիւններ. այնպէս որ դժուար է՝ նիւթին ծանօթ մասնագէտներէն զատ՝ ընտիր գաղափար մը կազմել անոնց մասին:

Կրօնական եւ դաւանաբանական հարցերը շօշափող գրութիւնները ամէնէն ծանր ձեռնմխութիւնները կրած են: Քաղկեդոնի 451 թուականին գումարուած ժողովով սկսած դաւանական խնդիրները աստուածաբանական վէճերու եւ եկեղեցական վարչական ոտնձգութիւններու ասպարէզ էին մէկ կողմէ յոյներուն հետ, եւ միւս կողմէ ասորի եւ պարսկական եկեղեցիներուն միջեւ:

Նուաղ ակնարկներ կան–հեղինակներուն մակդիրներէն դատելով–գործօն եւ վառվռուն ուսումնական կեդրոններու. այսպէս՝ Դուինի մէջ Կաթողիկոսական, Սինիքի Շաղիտա գիւղաքաղաքին մէջ, ինչպէս նաեւ Տարօնի (գուցէ Հարք աւանին մէջ) երեւելի Վարդապետարանները երկար տարիներ հնարաւոր դարձուցած են մտաւորական հունձք հասցնելու իրենց յատուկ տիտղոսներով՝ **վերծանող** (Դուին), **փիլիսոփայ** (Տարօն), **քերթող** (Սինիք) դպրոցական մակդիրներով:

Շիրակի դպրեվանքը, Արշարունիքի Երասխաձոր Վարդապետարանը, Կարինի Խաչկայ եւ Արագածոտնի Աբ. Աստուածածին վանքերը իրենց շուրջ հաւաքեցին գիտութեան ծարաւի պատանիներ եւ մեծ դեր կատարեցին ուսումնական կեանքին զարգացման գործին մէջ, կենսունակ թափով շարունակելով Դ եւ Ե դարերուն թարգմանական աշխատանքը:

Այս դպրոցները պատրաստեցին համայնագէտներ, որոնք խոր ծանօթութիւն ունէին քերականական, հռետորական, իմաստասիրական գիտութիւններուն եւ պատրաստ էին փայլելու ուսողական (թուաբանութիւն, երկրաչափութիւն), երաժշտական եւ աստղաբաշխական գիտութիւններուն մէջ:

